ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

614.31:658.8

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ԽՍՀՄ Ներքին առևտրաբերության ժողկոմատ
Ռազիոտարական Սպառողների վարչության
Հայաստանի բաժանմունք

Ф 353-302
А 1/37559

ՀՐԱՄԱՆ № 1799

ԽՍՀՄ ՄԱՏԿԵՐԲԱՅՄԱՆ ԺՈՂԿՈՄԱՏԻ
6-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1933 Թ.

1. ԽՍՀՄ Մատակարարման Ներքին արդյունաբերության ձեռնարկությունների բանվորների անձնական առողջապահական կանոններ։

2. ԽՍՀՄ Մատակարարման Ներքին արդյունաբերության ձեռնարկությունների ախտահանման կանոններ։

ՍՏԵՓԱՆՈՎԱՆ № 2 1936 թ.

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Ստեփանավանի շրջգործկոմի տպարան
Շրջլիտ Մ—№ 5971 Տիրաժ 1000

ՀՐԱՄԱՆ

ԽՍՀՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

№ 1799

Քաղ. Մոսկվա, 1 հունվարի 1933 թ.

Միության Մատժողկոմատի Սննդային արդյունաբերության ձեռնարկությունների սանիտարական վիճակի հետագա լավացման և արտադրության մեջ խստագույն սանհողջապահական ռեժիմ ստեղծելու նպատակով հրամայում եմ՝

1. Հաստատել և Միության Մատժողկոմատի Սննդային արդյունաբերության բոլոր ձեռնարկություններում գործածության մեջ մտցնել ընդամին կցվող «ԽՍՀՄ Մատժողկոմատի Սննդային արդյունաբերության ձեռնարկությունների բանվորների անձնական առողջապահական կանոնները»։

2. Պարտավորեցնել ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Գլխավոր սանիտարական տեսչությանը տեխնի-

կական պրոպագանդի և մնացած վարչություն-
ների հետ միասին հիշյալ կանոնները արտատ-
պել անհրաժեշտ քանակով, ժամանակաբաշխել այն
բոլոր ձեռնարկներին և ապահովել այդ կանոն-
ների մանրազննին մշակումը բոլոր գործարան-
ներում, ցեխերում և բրիգադներում։

3. Վերոհիշյալ պարտադիր սանիտարական
կանոնների արագ տարածումն ապահովելու հա-
մար թույլ տալ սննդային արդյունաբերության
բոլոր ձեռնարկությունների դիրեկտորներին,
կատարելու բոլոր անհրաժեշտ ծախսերը (ախտա-
հան ապարատների, ախտահան միջոցների, սան-
հագուստ ձեռք բերելու և սանիտարապահական
սարքավորումը) անկախ այն բանից, թե այդ
ծախսերը պլանով նախատեսված են, թե վոչ։

4. Պարտավորեցնել ձեռնարկությունների բո-
լոր դիրեկտորներին ու սանիտարական տեսուչ-
ներին վերոհիշյալ կանոնները ստորագրությամբ
հայտնել ցեխերի պետերին, փոխվարպետներին,
բրիգադիրներին, ճարտարապետ - տեխնիկական
անձնակազմին և տեխնիկական հսկողության աշ-
խատողներին, կարգ սահմանել արտադրության
մեջ աշխատանքի բոլոր նոր ընդունվողներին
ծանոթացնելու այս կանոնների հետ։

5. Պարտավորեցնել Գլխավոր Սանիտարական Տեսչության վոչ ուշ քան 1934 թ. հունվարը կազմակերպել ներկա հրամանի կատարման մասսայական ստուգումը և ստուգման արդյունքների մասին ինձ տեղեկացնել։

ԽՍՀՄ-ի Մասակարարման
ժողովրդական Կոմիսար՝
Ա. ՄԻԿՈՅԱՆ

Հաստատում եմ
ԽՍՀՄ-ի Մատակարարման
ժողովրդական Կոմիսար ՄԻԿՈՅԱՆ
31 ն հոկտեմբերի 1933 թ.

ԿԱՆՈՆՆԵՐ

ԽՍՀՄ-Ի ՄԱՏԺՈՂԿՈՄԱՏԻ ՍՆՆԴԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ

Սննդամթերքների արտադրության ժամանակ առանձնապահական ռեժիմ ստեղծելու նպատակով և աղտաբնակչությանը սննդամթերքների միջոցով վարակիչ հիվանդություններով վարակվելուց պաշտպանելու, ինչպես նաև սննդային թունավորումների հնարավորությունը կանխելու համար, Միության Մատժողկոմատի սննդային արդյունաբերության ձեռնարկությունների բոլոր բանվորների և ծառայողների համար սահմանվում է հետևյալ պարտադիր կանոնները։

I. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Արտադրության մեջ ընդունվում են միայն այն բանվորները ու ծառայողները, որոնք առողջապահական կայանի կամ բուժարանի կողմից թույլտվություն ունեն և առողջ են ճանաչված։

2. Արգելվում և հարբած վիճակում աշխատողներին արտադրության մեջ մտնել։

3. Ձեռնարկություն գալիս բանվորը պետք է մաքուր և խնամքով լվացած լինի ձեռքերը, վերնահագուստն ու կոշիկները պետք է լինեն մաքուր և ունենան վայելուչ տեսք։

II. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՑԵԽԻ ԲԱՆՎՈՐԻ ՀԱՄԱՐ

Գալով ցեխ բանվորը պարտավոր է՝

1. Ցեխի մուտքի մոտ տարված հատուկ քերիչներով, խոզանակներով և մաքրման այլ պարագաներով խնամքով մաքրել կոշիկների փոշին ու կեղտը։

2. Ոճառով լվանալ ձեռքերը կամ լվանալ մարմինը ցնցուղի տակ (այն ձեռնարկություններում, որտեղ բաղնիք կա), որից հետո հագ-

նել իր սանհագուստը։ Սանհագուստը կոճկած կամ թելով կապած պետք է լինի։

3. Վերնահագուստը, գլխի ծածկոցը, կրկնակոշիկները, կապոցները, պայուսակները և այլն թողնել հանդերձարանում, իր անձնական պահարանում։

4. Ունենալ մաքուր, չպատռտված սանհագուստ և արտահագուստ։

Աշխատողներին արգելվում է ցեխ մտնել կեղտոտ, պատռտած սան. և արտահագուստով, ինչպես նաև չմաքրած կոշիկներով։

5. Ցեխում աշխատանքն սկսելուց առաջ բանվորը պարտավոր է ձեռքերը լվանալ մեկ—տասներորդ տոկոսային քլորաջրով և սրբել ու չորացնել մաքուր սրբիչով։ Մթայն դրանից հետո բանվորն իրավունք ունի ձեռք տալ հումքին, կիսաֆաբրիկատին կամ մթերքին։

Աշխատանքի որվա ընթացքում ձեռքերը կեղտոտելիս, բանվորը պետք է լվացվի քլորաջրով։

6. Կտրուկ կերպով արգելվում է ցեխում թքամաններից բացի վորևե այլ տեղում թքելը։

7. Արգելվում է ծխելը ցեխերի այն տեղերից դուրս, վորոնք նշված են հրդեհային պաշտպանության կողմից։

8. Արտաքնոցից ոգտվելուց հետո բանվորը պարտավոր է խնամքով լվանալ ձեռքերն ոճառով և քլորային լուծույթով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մեծ ձեռնարկների արտաքնոցներում պետք է լինեն մաքրության և կարգ ու կանոնին հետևող հերթապահ սանիտարներ։

9. Արտադրության պրոցեսում բանվորը պարտավոր է մաքրություն պահպանել իր աշխատանքի տեղում։

Արգելվում է մնացորդները հատակին գցել, թափել, կեղտոտել և այլն։

10. Յուրաքանչյուր ցեխում պետք է ունենալ բավարար քանակությամբ և մաքրման համար հարմար կառուցված արկղներ՝ «սանիտարական խոտան», ուր բանվորը պարտավոր է լցնել արտադրության բոլոր մնացորդները։

Հումույթը, կիսաֆաբրիկատը կամ մթերքը արտադրության պրոցեսում հատակին ընկնելիս դրվում են հատուկ արկղներում և նրանց հետագա ոգտագործման հարցը լուծում է սանիտարական բժիշկը։

11. Աշխատանքն ավարտելուց հետո (հերթափոխության վերջում) յուրաքանչյուր բանվորի տեղը լվացած ու կարգավորված պետք է լինի։

12. Յուրաքանչյուր բանվոր և ցեխի վարչություն պարտավոր են հետեվելու, վորպեսզի արտադրության մնացորդները իր ժամանակին հեռացվեն այդ նպատակի համար նշանակված հատուկ հավաքարար անձնակազմի միջոցով։

13. Արգելվում է ցեխում վորևե բան ուտել։

14. Բանվորը պարտավոր է խստորեն հետևել արտադրության մեջ գործածվող ինվենտարի և կահավորման մաքրությանը։

15. Արտադրության մեջ վերամշակվող հումքին ու կիսաֆաբրիկատը լավորակ պետք է լինեն։ Փչացած, կեղտոտ և այլն մթերքների վերամշակումն արգելվում է։ Յուրաքանչյուր կասկածելի հումքի և կիսաֆաբրիկատի մասին բանվորը պարտավոր է անմիջապես հայտնել վարչությանն ու սանիտարական տեսուչին. առանց նրանց թույլտվության տվյալ մթերքը չի կարող յենթարկվել հետագա վերամշակման։

16. Վիրավորվելու, ջարդվելու և այլ վնասվածքների դեպքում, վորոնք տեղի յեն ունենում արտադրության պրոցեսում։ բանվորը պարտավոր է անմիջապես հայտնել ցեխային վարչությանը և դիմել մոտակա բուժկայանը։

17. Սննդային ձեռնարկների բոլոր բանվոր-

նեքն ու ծառայողները պարտադիր կարգով յենթարկվում են մարմնական քննության տեղական առողջապահական կայանում կամ բուժարանում, վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ։ Յուրաքանչյուր տեղում կառարվում է բացիկների պարտադիր պարբերական ստուգումը սանիտարական տեսչի կողմից։

III

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Բժշկի վորոշումը վերելք բանվորի կամ ծառայողի հիվանդության կամ ինվալիդության պատճառով արտադրությունից հանելու մասին — պարտադիր և արտադրության վարչության համար և առանց առարկության, սեռք և կիրառվի կյանքում։

18. Ցեխից հեռանալիս, բանվորը պարտավոր է բանվորական տեղը ցեխի վարպետին հանձնել սպասող վիճակում, հանել իրենից սան, վոր արտահագուստը և այն կախել այդ նպատակի համար հատկացված տեղում։

19. Բանվորը պարտավոր է հետևել վորպեսզի ինվենտարն ու կահավորումը (դռներ, խոցանակներ, ջնջոցներ և այլն) վերանոր ծածկվում են աշնանքի հավասարաչափ մաքրման համար, ոգտագործվեն ինչի համար նշանակված

ված են և պահվեն վորոշված հատուկ տեղում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հավաքման բոլոր ինվենտարն արտադրական ինվենտարից տարբերելու համար պետք է ներկվի հատուկ գույնով։

III ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ամեն որ առավոտյան անկողնուց յելնելիս բանվորը պարտավոր է՝

1. Թափ տալ իր սավանն ու վերմակը բակում, կարգի բերել իր անկողինը և մաքրել կոշիկները ու հագուստը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— ա) Ներքնակները ոչի յեն տրվում տասնորյակում վոչ պակաս, քան մեկ անգամ։

բ) Ներքնակները լցվում են կարիքի դեպքում։

2. Լվացվելիս բանվորը պարտավոր է խնամքով լվանալ յերեսը, վիզը և ձեռքերը մինչև արմունկը։ Ամառը վոտքերը պետք է լվանալ մինչև ծնկները և հնարավորության սահմաններ-

ռում հաճախակի փոխել գուլպանները՝ թույլ չտալով քրտինքի հոտի տարածումը։

3. Հանրակացարանում գտնվող բանվորներին արգիլվում է՝

ա) ծխել ննջարաններում,

բ) լվանալ սպիտակեղենն այդ նպատակի համար նշանակված հատուկ տեղերից դուրս։

4. Բանվորը պետք է հետևի, որ հանրակացարանն ավլվի և ողը մաքրվի որակյան առնըվազն յերկու անգամ։

5. Արգելվում է լվացարաններ դնել ընդհանուր ննջարաններում։ Լվացման շենքերը պետք է լինեն առանձին և հատուկ կահավորված։

Լվացարանները պետք է ունենան բավական քանակությամբ պտուկներ և միշտ ջրով լցված լինեն, իսկ լվացարանների տակի դույլերը լցվելիս ժամանակին պետք է դատարկել։

6. Հանրակացարանների ջրատաններում միշտ պետք է լինի անհրաժեշտ քանակով լավորակ յեռացրած ջուր։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յուրաքանչյուր մանակի դեպքում հում ջուր խմելը թույլատրվում է սան. տեսչի կողմից։

IV ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆԻ, ՎԱՐՍԱՎԻՐԱՆՈՑԻ ՅԵՎ ԲԱՂՆԻՔԻ ՀԱՄԱՐ

1. Ամեն մի բանվոր հանդերձարանում պետք է ունենա իր անձնական տեղը։ Յուրաքանչյուր տեղ մշտապես պետք է լինի միջատասուզ, կամ ամեն մի բանվոր պետք է ունենա իր առանձին պահարանը։

2. Հանդերձարանի շենքն անպայման ախտահանվում է (միջատների վոչնչացում) և դեզատիզացիայի յև յենթարկվում (կրծողների վոչնչացում) տասնորյակում վոչ պակաս, քան մեկ անգամ։

Բանվորների մեջ վերևում վարակիչ հիվանդության յերևան գալու դեպքում անմիջապես պետք է ախտահանում կատարել սանիտարական բժշկի ցուցմունքի համաձայն։

3. Հանդերձարանը և բանվորների անձնական պահարանները վերցորյակում վոչ պակաս քան մեկ անգամ պետք է լվանալ ոճառով և պահել ապատշաճ մաքրության մեջ։

Վարսավիրանոցը պետք է ունենա բավական քանակի մաքուր անձեռոցիկներ, անհա-

տական վրձիններ և ախտահանման միջոցներ։ Խուզած մաղերն անպայմանորեն հավաքվում են հատուկ հարմարեցրած թիթեղյա արկղներում և այրվում։

6. Հաղնիքից ոգեմոլ բանվորը պարտավոր է խնամքով լողանալ, պահպանելով խստագույն անձնական մաքրություն։

V ԱԽՏԱՀԱՆՈՒՄՆ ՈՒ ՀԱՎԱՔՈՒՄԸ

1. Հանդերձարանը, բաղնիքը, լվացքատունը և ախտահանող մեքենան սպառարկող բանվորները, ձեռնարկների հավաքարարները ու արտադրության մեջ մաքրություն պահպանող մբնացած վոչ անձնակազմը պարտավոր են ունենալ հատուկ, վորոշակիորեն տարբեր նշաններով սանիտարական հագուստ, վորի նշանները աչքի ընկնող կերպով տարբերում են այդ բանվորներին արտադրության մնացած բանվորներից։

2. Ձեռնարկների հավաքումն ու ախտահանումը կատարվում է գլխավոր Սանիտարական Տեսչության հրատարակած հատուկ հրահանգների համաձայն։

Ներկա կանոնների հիշյալ կետերը խախտելու համար հանցավորները հեռացվում են արտադրությունից և հանրակացարաններից։

ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Գլխավոր Սանիտարական Տեսչության պետ՝ ՏՈՄՊԱԿՈՎ

Հաստատում եմ
ԽՍՀՄ-ի Մատակարարման Ժողովրդական կոմիսար՝ ՄԻԿՈՅԱՆ
31-ն հոկտեմբերի 1933 թ.

ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Սննդի Արդյունաբերության ձեռնարկություններում հարկ յեղած ախտահանումն ապահովելու համար, որը սթերքները բակտերիալ աղտոտումից ազատելու և բանվորներին վարակիչ հիվանդություններից պաշտպանելու միջոց և հանդիսանում, սահմանվում և ախտահանման հետևյալ կանոնները.

I ԱՂԲԻ ՅԵՎ ՈՒՏԻԼԻ ԱՐԿՂՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

1. Մինչև ախտահանումն սկսելը բակի աղբարկղները խնամքով մաքրում են աղբից և կեղտոտություններից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Աղբը դուրս և տարվում հատուկ հարմարեցրած գումակով, կամ փակ արկղներով, որոնք աղբը

դուրս թափելուց հետո անմիջապես ախտահանվում են քլորակրի լուծույթով (500 գրամ կիրը լուծած մեկ դույլ ջրում)։

2. Բակի աղբարկղները մաքրելուց հետո, անմիջապես ախտահանում են քլորակրի լուծույթով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Տարվա տաք եղանակներին որպես վոչ պակաս քան 2 անգամ այդ լուծույթով սրսկում են աղբարկղների պարունակությունը։

3. Նույն այդ ձևով, նախապես մաքրելուց հետո, ախտահանում են նաև բակի և փողոցի թքամանները, սալորները և այլն։

4. Արտադրական մեծաղրդների համար գործածվող արկղները («սանիտարական խոտան») դատարկելուց հետո ամեն որ ախտահանում են քլորակրի լուծույթով և լվանում տաք ջրով կամ ուժեղ դոլորշիով։

II ԱՐՏԱՔՆՈՑՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

5. Բակի արտաքնոցների շենքերն ամեն որ, (որպես վոչ պակաս քան 2 անգամ) մաքրում են արտաքնոցներում պահվող հատուկ թիակով և ավելով, վորից հետո ախտահանում են քլորա-

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

կրի կամ ծծմբաթթվի խառնուրդի լուծույթով։ Վատասեղները ծածկում են քլորակրով թրջված ու ապակը, ախտահանում են ամեն անգամ աշխատանքի վերջում, նույն ախտահանիչ միջոցներով։

6. Ներդործարանային արտաքնոցները նույնպես խնամքով մաքրում են և շանդից թողած չքով լվանում, որից հետո յուրաքանչյուր հերթափոխության ախտահանում են թարմ պատրաստած հանգցրած կրի կամ քլորակրի լուծույթով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Արգելվում է արտաքնոցներում դատարկները ունենալ. դռները այնպես պետք է հարմարեցված լինեն, որպեսզի յերկու կողմից ել բացվեն վոտքի ամենաթեթև հարվածից։

Արտաքնոցների դռներն ամեն որ պետք է լվանալ մոխրաջրով ու ոճառով։

7. Ներդործարանային արտաքնոցների պատնեշները ամեն որ պետք է լվանալ տաք ջրով, մոխրաջրով և ոճառով։

8. Վատասեղները, պիսուարները և պիսուարների մոտակի թասերը պետք է մաքրել 5 տոկոսային յուրեղային Կարբոլաթթվի լուծույթով։ Դրա համար, որից հետո լվանալ շանդից թողած ջրով, իսկ թասերը լվանալ թարմ թեփով

III ԱԽՈՌՆԵՐԻ, ԽՈՋԱՆՈՑՆԵՐԻ, ՃԱԳԱՐԱԲՆԵՐԻ, ԹՌՉՆՈՑՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՂ ՇՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ՅԵՎ ԳՈՒՄԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

9. Ախոռները, խոզանոցները, ճագարաբները, թռչնոցները, ծառայող շների շենքերը և գումակի հրապարակները ամեն որ խնամքով մաքրել աղբից և այլն։

Վերոհիշյալ շենքերի ախտահանումը կատարվում և նրանց պարբերաբար սպիտակացնելով, նրանց կեղտատար փորակները՝ քլորակրի լուծույթով, իսկ աղբակուտակման հրապարակները՝ քլորակրով։

IV ՀՈՒՄՈՒՅԹԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ, ԾԱԾԿԵՐԻ ՅԵՎ ՄԵՐՁԱՏԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

10. Ամեն որ աշխատանքը վերջացնելուց և հումույթը հեռացնելուց հետո հրապարակը խնամքով մաքրում են, ջրով լվանում և ծածկում կրի բարակ շերտով, կամ խոնավացնում կրաջրով ու

այդպես պահում ամբողջ դիշերը։

11. Ամեն որ առավոտյան մինչ հումույթ ստանալը, հումույթային հրապարակը պետք է խնամքով մաքրել և կրի մնացորդները շլանգի ջրով լվանալ։

12. Ծածկի տակն ու մերձատար ճանապարհները պետք է մաքրել կեղտից և հումույթի մնացորդներից, լվանալ ու սրսկել 5 տոկոսային քլորային լուծույթով կամ կրակաթով։

13. Արգելվում է հումույթային հրապարակների մոտ հումույթային մնացորդների կամ աղբի կուտակումը։

14. Փչացած, անոգտագործելի հումույթը գործարանի տերիտորիայի վրա մեկ որից ավելի պահելն արգելվում է։

V ՏԱՐԱՅԻ, ՅԵԽԱՅԻՆ ԻՆՎԵՆՏԱՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՅԵՎ ԱՊԱՐԱՏՈՒՐԱՅԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

15. Սննդային արդյունաբերության մեջ տարբերի տեսակները, վորոնք ամենից շատ են տարածված,— տակառներ, փայտե արկղներ, տպակյա շշեր, թիթեղյա տուփեր, զամբյուղներ,

ինչպես նաև սարքավորման և պարագաների սրբելու ջնջոցներ, տրանսպորտյոր, արմատահատներ և այլն,— ախտահանվում են արտադրության բնույթի և իր նշանակման նպատակին համապատասխան, ըստ վորում ախտահանման ձևն ու բնույթը յուրաքանչյուր առանձին դեպքում վորոշում է տվյալ արտադրության սանիտարական տեսուչը։

16. Տարայի ախտահանման համար վորպես ոչնչ անհրաժեշտ է գործադրել՝

ա) Տակառների նկատմամբ (հետադարձ տարայի) յերկու յերեսից խնամքով մաքրումը և վոչ պակաս քան 5 րոպե ուժեղ գոլորշիով լվանալը կամ յեռացրած ջրով վողողելը։

բ) Հումության համար գործադրվող փայտե արկղները ախտահանվում են նույն ձևով։

գ) Ապակյա շշերն ախտահանվում են՝ 10 տոկոսյա կրակաթի լուծության մեջ դնելու և դրանից հետո տաք ջրով կամ գոլորշիով խնամքով լվանալու միջոցով։

դ) Ներգործարանային ինվենտարն ախտահանում են (կխատակառներ, թասեր, թարախ, շերեփ և այլն) 3 տոկոսյա շչոլոկի լուծությամբ և դրանից հետո տաք ջրով կամ ուժեղ գոլորշիով լվանում։

յե) Ցեխային սարքավորումն ու ապարատուրան ախտահանվում են սկզբում խնամքով մաքրելու, շչոլոկի տաք լուծույթով լվանալու, ինչպես և տաք ջրով ու սաստիկ գոլորշիով շփելու միջոցով։

զ) Թիթեղյա տուփերը խնամքով լվանում են յեռացրած ջրով կամ շփում ուժեղ գոլորշիով։

ե) Զամբյուղները լվանալուց հետո ընկղմում են յերեք ըոպեյով 5 տոկոսանոց քլորային կամ հանգցրած կրի լուծույթի մեջ ու ապա լվանում շլանգից բաց թողնվող ջրով։

VI ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆՆԵՐ, ԲԱՂՆԻՔՆԵՐ, ԴՈՒՇԵՐ, ԼՎԱՑՔԱՏՆԵՐ ՅԵՎ ԱՅԼՆ) ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

17. Հանդերձարաններն ամեն որ մաքրում են փոշուց, սարդոստայնից, իսկ անհատական պահարանները վերցրյակում վոչ պակաս, քան մեկ անգամ խնամքով մաքրում են ոճառա—սոխրաջրային լուծույթով։

18. Ցնցուղները, բաղնիքները, լվացքատները ամեն որ աշխատանքը վերջանալուց հետո

խնամքով մաքրում են։ Նստարանները, հատակները ու ինվենտարը մաքրում են ոճառա—մոխրաջրային լուծույթով և լվանում տաք ջրով։

19. Հանդերձարանում վոջիլներ հայտնաբերելու դեպքում սանիտարական բժշկի ցուցմունքի համաձայն հանդերձարանները խնամքով ախտահանում են (միջատների վոչնչացում) իսկ հագուստն ուղարկում մոտակա կամերան։

20. Վորևե սուր վարակիչ հիվանդություն յերևալու դեպքում ախտահանումը կատարվում են առողջապահական տեղական որգանները՝ սանիտարական տեսչի ակտիվ մասնակցությամբ և ոգնությամբ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բոլոր անհրաժեշտ հակահամաճարակային սրսկումները կատարում են առողջապահության տեղական որգանները։

VII ԳՈՒՄԱԿԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

21. Սայլային և ավտոմոբիլային վոդջ գումակը, վորը փոխադրում է՝ հումույթ, կիսաֆաբրիկատ և պատրաստի արտադրանք, սիստեմատիկորեն պետք է մաքրվի և լվացվի շլանգներից բաց թողնված ջրով—սանիտարական տեսչի սահմանած ժամկետին, յելնելով տեղական պայմաններից։

22. Գումակի ախտահանումը պարտադիր է բոլոր դեպքերում, լինի այդ պայմանական պլատանի հումույթ, ֆաբրիկատներ կամ ոգտագործելի նյութ փոխադրելիս։

Այդպիսի դեպքում ախտահանում են 5 տոկոսանոց քլորակրի լուծույթով ու ապա շանգից բաց թողնվող ջրով լվանում։ Բացահայտ վարակված հումույթի կամ ֆաբրիկատների տեղափոխումների դեպքում ախտահանում են 20 տոկ. քլորակրի լուծույթով, գումակի բոլոր մասերն հորդառատ թրջում ու վոչ շուտ քան մեկ ժամ հետո ջրով լավ լվանում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Սիբիր ախտ հայտնաբերելիս գումակի ախտահանման ձևերը յուրաքանչյուր առանձին դեպքում վորոշում է սանիտարական տեսուչը։

23. Հարկավոր չափով ախտահանիչ միջոցները ու ապարատուրան ձեռք է բերվում վարչության կողմից՝ ըստ սանիտարական տեսչի ցուցմունքների—ձեռնարկության հաշվին և պահվում են հատուկ նշանակված տեղում։

Ախտահանումը կատարվում է դրա համար հատկապես պատրաստված բանվորների կողմից՝

սանիտարական տեսչի ղեկավարությամբ և պատասխանատվությամբ։

Սանիտարական տեսչի պահանջներն խստահանման մասին պարտադիր են ձեռնարկության վարչության համար։

ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Գլխավոր
Սանիտարական Տեսչության
պետ՝ ՏՈՄՊԱԿՈՎ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038388

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տող	Տպված է	Պետք է լինի
6	1 ներքևից	վում է	վում են
9	11 վերևից	արդելվում է մեացորդները	արգելվում է մթերքի մեացորդները
13	9 ներքևից	պտուկներ	պտուկներ և ծորակներ
18	6 և 9 ներքևից	մոխրաջրով	մոխրաջրով (շչոլոկով)
19	6 ներքևից	մերձատար ճանապարհների	մերձատար ճանապարհների (под'ездных путей)
22	3 վերևից	մաքրելու, շչոլոկի տաք լուծույթով լվանալու, ինչպես և տաք ջրով ու սատիկ գոլորշիով շփելու միջոցով։	մաքրելու, ապա շչոլոկի տաք լուծույթով լվանալու և յեռացող ջրով կամ ուժեղ գոլորշիով շփելու միջոցով։
23	10 վերևից	կատարվում են	կատարում են

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՊՐԱԴԱՐԱՆ № 2

[054]

757

А I/3759

1. Правила личной гигиены рабочего на предприятиях пищевой промышленности Наркомснаба СССР.

2. Правила производства дезинфекции на предприятиях пищевой промышленности Наркомснаба СССР